3) Գծագրական (գրաֆիկ) ներկայացման համար աշակերտն իր ձեռքի տակ պէտք է ունենայ մի քանոն՝ մի երեսը մետրային միւսը աբշինի բաժանումներով, մի անկիւնաչափ (փայտէ ուղանկիւն եռանկիւնի), մի տրանսպորտէր և մի կարկին:

4) Մի յատուկ նախապատրաստական իրաւունական ընթացքի պէտքութիւն չկայ, որովհետև ձևագիտութիւնը իր ամբողջ ընթացքում իրաւունաբար է աւանդուելու:

(շարունակելի) Ա. Օ.

ՄԵՂԱՆՁՈՒՄՆԵՐ՝ ՀԱՑԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

(1910 թ. թերթերից).

Նոր լեզուի մշակութեան գաղափարն է՝ որքան կարելի է. շատ եւ առաւել մեծ բազմութեան հասկանալի կերպով խօսել.

Մ. Նալբանդեանց.

Լեզուն գեղեցիկ ըլլալու համար պէտք է ըլլայ պարզ. Լեզուն պարզ կըլլայ՝ երբ... գաղափարի մը՝ զոր ամեն մարդ ունի. իրի մը. զոր ամեն մարդ կճանչնա. գործողութեան մը՝ զոր ամեն մարդ կկրէ. կտրուի այն անունը. զոր ամեն մարդ կուտայ.

Հ. Ն. Աճառեանց.

Պարբերական թերթ կամ թերթեր կարդացողներն, անշուշտ միակերպ չեն վերաբերուում գործին: Ոմանք կարդում են՝ իմանալու կեանքի անցուդարձերը, ոմանք՝ նորոյթներ իմանալը և այլն: Շատ հաւանական է, սակայն, որ այդ բոլորի հետ միասին գտնուեն կարդացողներ, որոնք առանձին ուշք լինեն դարձնելիս այլ և յօդուածի ձևի, լեզուի հայացիութեան և իմաստի պարզութեան վրա:

Ես, զոնէ, մէկն եմ այդ վերջիններից. և ուզեմ-չուզեմ, ուշք եմ դարձնում գրուածքի այդ կողմի վրա էլ: Ասելին կասեմ. ո՛չ-հայ ձևերն ու անկանոնութիւնները ուղղակի ծակում են աչքերս: Այդպիսի դէպքերում, բոլոր կարդացածս մի կողմն է մնում, իսկ գրութեան որև է օտարոտի ձև կամ բառ՝ ուղղակի կլանում է բոլոր ուշքս:

Ու ես մտածում եմ... եթէ ես ու ինձպէսներն էլ ուրիշ շատ անտարբերների պէս ձեռքներս ծալենք ու բաւականանանք միայն դիտելով լեզուական աւերումները, հայ լեզուի վերջն ինչ է լինելու:

Եւ այս ասում եմ միայն պարբերական թերթերի վերաբերմամբ. իսկ այն կողմը կան ոչ-պարբերական գրուածքներ՝ ահագին քանակութեամբ գրքեր...

Այս պատճառով ես մտածեցի՝ հրապարակ հանել հայագրութեան դէմ կատարուող մեղանչումները, որոնք աչքի են ընկնում այս կամ այն պարբերական թերթում:

Բայց առաջուց պէտք է ասեմ, որ այս քայլն անելով, ես ամենևին յաւակնութիւն չունեմ՝ այս մասում ինձ անսխալական ենթադրելու:

I Դժուարամարս ոճեր:

«Թատրոն եւ երաժշտութիւն» №№ 1-2.-1)... նա զանազան ժամանակ երևան է եկել «Евгеній Онегинъ», «Фаустъ», «Пиковая дама», «Карменъ», «Демонъ», «Вертеръ», «Паяцы» և այլ օպերաներում (***):

Կարելի էր գրել՝ ..նա զանազան ժամանակ երևան է եկել հետևեալ օպերաներում՝ «Евгеній Онегинъ», «фаустъ»...

«Մշակ» № 43-2) Յանձնաժողովս միայն երկու տեղից չէ կարողացել ստանալ մանրամասն հաշիւ, այն է՝ Հին-Նախիջևանի նախկին յաջորդ Թովմա վարդապետին և Բարվանսարա-Ղազախ-Շամշադին ճիւղերին ուղարկուած դումարների գործադրութեան մասին (Գարեգին արքեպիսկոպոս, Ալ. Մելիք-Ազատեանց):

Յանձնաժողովս չէ կարողացել ստանալ մանրամասն հաշիւ միայն երկու տեղից, այն է՝ Հին-Նախիջևանի նախկին յաջորդ՝ Թովմա վարդապետից և Բարվանսարա-Ղազախ-Շամշադնի ճիւղից՝ նրանց ուղարկուած դումարների գործադրութեան մասին:

«Հորիզոն» № 58.-3) Ժողովն ընտրել է մի ենթամանաժողով, որ կազմուած է Ն. Աբէլեանից, Ի. Լիսիցեանից, ինժիներ Տէր-Սարգսեանից, Մ. Զաբաբից և ուրիշներից (խմբագրութիւն):

Ժողովն ընտրել է մի ենթամանաժողով, հետևեալ անձերից՝ Ն. Աբէլեան, Ի. Լիսիցեան.. և ուրիշներ:

«Մշակ» № 69.-4) Կովկասի փոխարքան հնարաւոր դատաւորել զինուորական դատարանի դատավճիռը.. այսպէս.

առաջին երկուսին 15, Ժիրգուլեվիչին՝ 10, Մամուլեանին՝ 8 և Բոգեանսկին 6 տարով (խմբ.)։

.. այսպէս առաջին երկուսին 15 տարով, Ժիրգուլեվիչին՝ 10, Մամուլովին՝ 8 և Բոգեանսկիին՝ 6։

«Արարատ» № 2.-5).. ուր դասընթացքն աւարտելուց յետոյ սարկաւագ և 1886 թուին էլ վարդապետ է ձեռնադրուել.. (խմբ.)։

.. ուր դասընթացքն աւարտելուց յետոյ ձեռնադրուել է սարկաւագ և 1886 թուին էլ՝ վարդապետ..

«Մշակ» № № 70.-6).. որոնց հետ մենք էլ ճգնում էինք.. Բեթհովէնի լինն հրաշալիքներից եօթներորդ սիմֆոնեան կամ երկրորդ սիմֆոնիայի allegretto-ն և կամ գէթ մեզ վրա լաւ տպաւորութիւն թողած ջութակահար Դ. Դաւթեանի «Հայու հոգին» վերարտադրել մեր երևակայութեան մէջ.. (Ընչազուրկ)։

.. որոնց հետ մենք էլ ճգնում էինք վերարտադրել մեր երևակայութեան մէջ.. Թեթհովէնի լինն հրաշալիքներից.. «Հայու հոգին»։

«Մշակ» № 99.-7) Այս բոլորը մենք չէինք պատմի մեր ընթերցողներին, եթէ մեր յիշուած թղթակիցը ինքը չէր դնի այդ հարցը հրապարակի վրա և չէր յայտնի.. (Ա. Ք.)։

... եթէ մեր յիշուած թղթակիցն ինքը չդնէր այդ հարցը.. և չյայտնէր..

II Ռուսական ոճեր։

«Մշակ» № 50.-8) Նրա (Զարեհի) արձանը.. ներկայացնում է մի կնոջ.. և սեղմած ունի.. մի հերարձակ աղջկայ (խմբ.)։

.. ներկայացնում է մի կին.. և սեղմած ունի մի.. աղջիկ։

«Մշակ» № 35.-9).. Սօլօլակը խնամ ամբարտաւանացել և ստորացել է, որպէսզի նա արժանի լինի մեր գուրգուրանքներին.. (**)։

.. Սօլօլակն այն աստիճան ամբարտաւանացել և ստորացել է, որ արժանի չէ մեր գուրգուրանքներին։

«Մշակ» № 26.-10).. բաժանելով.. թերթի կարծիքները.. (Յ. Գասպարեան)։

.. միանալով.. թերթի կարծիքներին. կամ՝ համաձայն լինելով.. կարծիքներին։

«Մշակ» № 120.-11).. այդպիսի տարբերը նշանակութեամբ

բառերը միօրինակ ձևով կը գրուեն (ինչպէս այժմ շատերից գրւում են..) (Ստ. Մալխասեանց):

. . ինչպէս այժմ շատերը գրում են. . կամ՝ շատ շատերի կողմից գրվում են.

«Հորիզոն» № 70.–12) *Դպրոցներում անշուշտ սխալագրութիւններ շատ կլինեն, այն էլ ոչ միայն «ւ»-ի պատճառով* (Լ.):

. . այն էլ ոչ միայն «ւ»-ի պատճառով, այլ և . . .

«Հորիզոն» № 74.–13) *Եւ այս դրութիւնը պաշտպանում են ոչ միայն մարդկային մտքի լաւագոյն ներկայացուցիչները* (Լ.):

. . ոչ միայն մարդկային մտքի լաւագոյն ներկայացուցիչները, այլ և . . .

կամ՝ միայն մարդկային մտքի լաւագոյն ներկայացուցիչները չեն, որ պաշտպանում են այս դրութիւնը:

«Մշակ» № 78.–14) *Պատարագը . . դատարկ է ժողովրդից* (Սալ-Ման):

Պատարագն անցնում է առանց ժողովրդի: Կամ՝ պատարագին ժողովուրդ չի երևում:

III Ձանձրալի լեզու.

«Մշակ» № 96.–15) *առ այժմ . . որոշուեց, որ վարչութեան բոլոր անդամները ոչ մի վարձատրութիւն չունենան. . այլ հիմնարկութիւնը զետեղել դումայի սենեակներից մէկում, որը . . . յարմարեցրեց բանկային պարապմունքների համար, որոնք տեղի կունենան . . կիրակի օրերը, որոնք գրեթէ չեն խանգարում պարապմունքներին* (Ս. Ե. Ա.):

«Մշակ» № 64.–16) *Շատ անգամ է պատահում, որ այդպիսի թղթակիցը, ինքը զբաղուած լինելով, հնարաւորութիւն չէ ունենում անձամբ ականատես լինելու որև է դէպքի, բայց որովհետև այդ դէպքը հասարակական նշանակութիւն է ունենում և ինքը թղթակիցը կարևոր է համարում ծանօթացնելու նրա հետ իր լրագրի ընթերցողներին, ստիպուած է գրելու դէպքի մասին կողմնակի վստահելի անձնաւորութիւնների պատմածների հիման վրա, և պատահում են դէպքեր, երբ նոյն իսկ այդ վստահելի անձնաւորութիւնները ի չարն են գործ դնում թղթակցի հաւատը, խեղաթիւրուած կերպով պատմում նրան դէպքի մասին, և վերջոյ՝ թղթակցութիւնը տպագրուելուց յետոյ միայն պարզվում է, որ թղթակիցը խաբուած է եղել, ստիպուած է լինում ինքը հերքելու իր գրածը և ներողութիւն խնդրելու վիրաւորուած անձնաւորութիւնից, ինչպէս վերջերս պատահել էր «Մշակի» Բաքուի թղթակիցներից մէկի՝ Գարագաշի հետ* (Վ. Դիմաքսեան):

Լ. Ք. Ն.